

Արձանագրություն N7

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի գիտխորհրդի 05.12.2017թ. նիստի

Օրակարգ.

1. Կ. Կարապետյանի 75-ամյա հոբելյանի առթիվ ԵՊՀ պատվոգրի հանձման արարողությունը:
2. 2016-2017 ուս տարվա երկրորդ կիսամյակի սոց հարցման արդյունքների ամփոփում:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 32 անդամներից 24-ը:

1. ԼՍԵՑԻՆ՝ Ֆակուլտետի դեկան Ս. Աբրահամյանը և այլ ելույթ ունեցողները շնորհավորեցին Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի պրոֆեսոր Կ. Կարապետյանին ծննդյան 75-ամյա հոբելյանի կապակցությամբ: Մասնավորապես կարևորեցին Կ. Կարապետյանի դերը՝ 1991թ.-ին ֆակուլտետի հիմնադրման, դրա հետագա ղեկավարման և կայացման գործում: Նշվեց, որ Կ. Կարապետյանը լավ, հոգատար ընկեր է և հյուրընկալ տանտեր: Այնուհետև դեկանը Կ. Կարապետյանին հանձնեց ԵՊՀ պատվոգիրը՝ Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի կայացման գործում իր ունեցած ավանդի համար:

2. ԼՍԵՑԻՆ՝ Անդրադառնալով 2016-2017 ուս. տարվա երկրորդ կիսամյակի սոց հարցման արդյունքների ամփոփմանը՝ Ս. Աբրահամյանը նշեց, որ սոց. հարցման արդյունքներն ընդհանուր առմամբ գոհացուցիչ են /ֆակուլտետի գնահատականը 4.62 է/, թեև կան ցածր գնահատականի մի քանի մասնավոր դեպքեր, որոնք էլ պետք է քննարկվեն ամբիոններում: Դեկանը նաև նշեց, որ պետք է քայլեր ձեռնարկել, որպեսզի ուսանողներն ավելի ակտիվ մասնակցեն առցանց հարցմանը, քանի որ մասնակցելիությունը շատ հաճախ գոհացուցիչ չէ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Ա. Առաքելյանը տեղեկացրեց, որ ինքն արդեն առանձնագրույց է ունեցել ամբիոնի դոցենտ Յու. Խաչատրյանի հետ, որին ուսանողները գնահատել են 2.69: Նա հույս հայտնեց, որ Յու. Խաչատրյանը, որը լավ մասնագետ է, հաշվի կառնի իրավիճակի լրջությունը և կշտկի այն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Որոշեցին՝

- Հրատարակության երաշխավորել Արտասահմանյան գրականության ամբիոնի պրոֆեսոր Ա. Առաքելյանի, դոցենտներ Ա. Սեդրակյանի, Ս. Ստեփանյանի, Վ. Արսենյանի գիտական աշխատությունները:

Գիտխորհրդի նախագահ՝

Ս. Աբրահամյան

Գիտխորհրդի քարտուղար՝
5 դեկտեմբերի, 2017 թ.

Գ. Մուրադյան

